

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՓԱՐԻԶՈՒՄ

### ՄԵԿՆՈՒՄ ՓԱՐԻԶ

**Հունիսի 2-ին, շաբաթ օրը,** Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ Տ. Ներսես եպս. Պոլսայլյանի և գավազանակիր Տ. Ասողիկ աբեղա Արիստակեսյանի, Ռիո դե Ժանեյրոյից «Էր-ֆրանս» օդանավով մեկնում է Փարիզ:

Օդանավակայանում Հայոց Հայրապետին բարի ճանապարհ մաղթելու էին եկել Տ. Գրիգորիս եպս. Բունիաթյանը, Տ. Տաթև ծայր. վրդ. Ղարիբյանը, Սան Պաուլոյի Ազգային Կենտրոնական Վարչության անդամներ, Ռիո դե Ժանեյրոյի «Արարատ լեռ» ընկերակցության անդամներ և բազմաթիվ հայ հավատացյալներ:

### ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՓԱՐԻԶՈՒՄ

12 ժամ տևող թռիչքից հետո Վեհափառ Հայրապետին փոխադրող օդանավը վայրէջք է կատարում Փարիզի «Շառլ Դը Գոլ» օդանավակայանում, որտեղ Նորին Սրբությանը դիմավորելու էին եկել Փարիզի նորընտիր առաջնորդ Տ. Գյուտ եպս. Նագգաշյանը, Իսի լե Մուլինոյի հայոց հոգևոր հովիվ Տ. Մյուռոն վրդ. Գըվըքյանը, Փարիզի հայոց Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու քահանայից դասը, Փարիզի հայոց Կրոնական Ընկերակցության ներկայացուցչական և վարչական ժողովների և Մայր եկեղեցու հոգաբարձության անդամները, ազգային վանական մարմինների և բարեսիրական կազմակերպությունների ներկայացուցիչներ, հայկական թերթերի ներկայացուցիչներ և բազմաթիվ հավատացյալներ:

Հայոց Հայրապետին ողջունելու էր եկել նաև Ֆրանսիայում սովետական դեսպանատան ներկայացուցիչ տիար Լ. Գասպարյանը:

Օդանավակայանում պատվո հյուրերին հատկացված սրահում ողջույնի և բարիգալստյան խոսքերի փոխանակումից հետո Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Փարիզի «Վեստմինստեր» հյուրանոցը, որտեղ բնակվում է Ֆրանսիայի մայրաքաղաքում իր կեցության օրերին:

### ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՓԱՐԻԶԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

**Հունիսի 3-ին, կիրակի:** Երկրորդ ծաղկազարդ:

Այսօր, առավոտյան ժամը 11-ին, Փարիզի հայոց Ս. Հովհաննես Մկրտիչ

Մայր եկեղեցում իր առաջնորդական անդրանիկ ս. պատարագն է մատուցում Փարիզի նորընտիր առաջնորդ Տ. Գյուտ եպս. Նագգաշյանը:

Ս. պատարագին ներկա էին Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա-ն, Փարիզի կարդինալ արքեպիսկոպոսի ներկայացուցիչ Դանիել եպս. Բեզրիկը, Փարիզի Ռումեն Օրթոդոքս Եկեղեցու առաջնորդ Ադրիան եպս. Ռիչան, Անտիոքի պատրիարքության Փարիզի հույն օրթոդոքս Եկեղեցու ներկայացուցիչ Գաբրիել եպս. Սալիբին, Ֆրանսիայի հայ կաթողիկե համայնքի էգզարխ գերապայծառ Գրիգոր եպս. Կապրոյանը, Ֆրանսիայի ավետարանական Եկեղեցիների ընդհանուր քարտուղար վերապատվելի Նիկոլան, Մոսկվայի ռուս պատրիարքության ներկայացուցիչ հայր Նիկոնը, հայ ավետարանական Եկեղեցու Փարիզի հովիվ վերապատվելի Ռընե Լեոնյանը, ինչպես նաև բազմաթիվ հայ հավատացյալներ:

Ս. պատարագին ներկա էր նաև Այֆորվիլի քաղաքապետ, Ֆրանսիայի հանրային ապահովության մինիստր Ժոզեֆ Ֆրանչեսկին:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ է խոսում պատարագիչ սրբազանը, այնուհետև բեմ հրավիրում Վեհափառ Հայրապետին: Նորին Սրբությունը այս առթիվ ներկաներին հակիրճ կերպով ներկայացնում է դեպի Լատինական Ամերիկա Իր ուղևորության տպավորությունները, իսկ վերջում շնորհավորում է Տ. Գյուտ եպս. Նագգաշյանին՝ նոր պաշտոնի կոչվելու առթիվ, իբրև առաջնորդ Փարիզի:

Հավարտ ս. պատարագի, առաջնորդարանի ընդունարանում հավատացյալների բազմությունը մոտենում է Վեհափառ Հայրապետին և աջահամբույրով ասանում Նորին Սրբության օրհնությունը:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ՓԱՐԻԶԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԺԱԿ ՇԻՐԱԿԻ ՀԵՏ

**Հունիսի 4-ին, երկուշաբթի օրը,** առավոտյան ժամը 12-ին, Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով այցելում է Փարիզի քաղաքապետարան և հանդիպում ունենում Փարիզի քաղաքագլուխ Ժակ Շիրակի հետ:

Այս առթիվ Նորին Սրբությանը ուղեկցում էին Փարիզի նորընտիր առաջնորդ Տ. Գյուտ եպս. Նագգաշյանը, Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ Մայր եկեղեցու վարչության ատենապետ պրն. Արմեն Բարսեղյանը և Փարիզի հայոց Կրոնական Ընկերակցության ներկայացուցչական ժողովի ատենապետ պրն. Նուրիան Ֆրենկյանը: Հանդիպմանը ներկա էին հայ կաթողիկե համայնքի Ֆրանսիայի էգզարխ գերապայծառ Գրիգոր եպս. Կապրոյանը և հայ ավետարանական Եկեղեցու Փարիզի հովիվ վերապատվելի Ռընե Լեոնյանը:

Հանդիպմանը ներկա էին նաև Ֆրանսիայի միջազգային հարաբերությունների ընդհանուր տնօրեն Բեռնար Բիոն և ծերակուտական Ռոժե Ռոմանին:

Նորին Սրբության և մեծարգո քաղաքագլխի միջև տեղի է ունենում շուրջ 45 րոպե տևող բարեկամական ջերմ զրույց:

Այնուհետև, ի պատիվ Հայոց Հայրապետի, քաղաքապետարանի ընդարձակ սրահում տրվում է պաշտոնական ճաշկերույթ:

Ճաշկերույթի ընթացքում հետևյալ բովանդակալից ճառով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը:

Հանդիպում Փարիզի քաղաքապետարանում քաղաքագլուխ Ժակ Շիրակի հետ

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՓԱՐԻԶԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Մեծահարգ Տիար Ժակ Շիրակ,

Քաղաքապետ Փարիզի,

Վերստին խոր գոհունակությունը և պատիվը ունիմ մայրաքաղաքի քաղաքապետարանի այս պալատին մեջ վայելելու Ձեր բարեկամական ջերմ ընդունելությունը:

Խորապես զգացված եմ Ձեր այս բարձր ուշադրության համար և կխորհիմ, թե իմ անձի միջոցավ այս պատիվը կտարածվի Հայ Առաքելական մեր ամբողջ Եկեղեցվո վրա, որուն առաջին սպասավորն եմ ես Տիրոջ ողորմությամբ:

Ես կվերադառնամ Հարավային Ամերիկա իմ հովվապետական ուղևորութենեն, ուր այցելեցի հայ եկեղեցական համայնքները՝ Արժանթին, Ուրուգվայ և Բրազիլ, քրիստոնասեր երկիրներ, ուր կբնակին ավելի քան հարյուր քսան հազար հավատացյալ զավակները Հայ Եկեղեցիի, որոնք այդ երկիրները հաստատված են առաջին համաշխարհային պատերազմեն հետո՝ 1915 թվականի ցեղասպանութենեն ազատվածներու հաջորդ սերունդները:

Նաև այս ուղևորության առթիվ իմ գլխավոր նպատակը եղավ Աստուծո օրհնությունները բաշխել մեր Եկեղեցվո հավատացյալներուն աղոթքով ու մաղթանքով, որ անոնք բոլորը մնան հավատարիմ իրենց քրիստոնեական հավատքին և մեր Մայր Եկեղեցիին, սրբությամբ պահպանեն Քրիստոսի Ավետարանի հոգևոր ու բարոյական պատգամները իրենց ընտանեկան ու համայնական կյանքին մեջ, մնալով միաժամանակ հավատարիմ ու շինարար քաղաքացիները իրենց բնակած երկիրներու:

Վերադառնալով Հարավային Ամերիկյան այս երեք երկիրներեն, վկայությունը կբերեմ, որ մեր Եկեղեցվո հավատացյալները կրոնական զորավոր համայնքներ կազմած, կջանան կենդանի պահել քրիստոնեական բարոյական արժեքները՝ հավատալով, որ Քրիստոս, նաև մեր օրերուն, կմնա՝ մարդկության ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը: Ինձ համար խորին մխիթարություն եղավ հաստատել այս իրողությունը աշխարհի մը մեջ, ուր երբեմն կմոռցվի հավիտենական ճշմարտությունը, թե՝ «Ոչ միայն հացիւ կեցցէ մարդ, այլեւ բանիւ Աստուծոյ»:

Հարավային Ամերիկայեն կբերեմ նաև վկայությունը համայն Հայ Եկեղեցվո ու ժողովուրդի խորին երախտագիտության՝ հանդեպ մեծահոգի Ֆրանսիայի ու անոր քաղաքական բարձր անձնավորությանց, որոնք հավատարիմ ֆրանսիական ազգության ավանդական մարդասիրական և արդարության սկզբունքներու, այնքան ակնիվ եռանդով պաշտպան կեանդիսանան հայ ժողովուրդի արդար դատին, որպեսզի միջազգային ճանաչում ստանա մոտ երկու միլիոն հայ ազգաբնակչության ցեղասպանության ողբերգությունը, կատարված Օսմանյան կառավարության կողմե 1915—1916 թվականներուն Արևմտյան Հայաստանի մեջ:

Հայ Եկեղեցվո ու ժողովուրդի քրիստոնեական խիղճը կսպասե քաղաքակիրթ պետություններու և Միացյալ Ազգերու Կազմակերպության արդար վճիռը, որովհետև Փրկիչը մեր Քրիստոս, արեգակը արդարության, կմնա անոնց գերագույն ապավենը և հույսը:

Հայ Եկեղեցիին համար, հայ հավատացյալներուն համար 1915-ի ցեղաս-

պանության ճանաչումը մանավանդ բարոյական խղճի հարց է, ավետարանական արդարության հարց է:

Ճշմարտության և արդարության պատվանդանի վրա է, որ կարող է իրապես գոյանալ նաև համերաշխություն հայ և թուրք ժողովուրդներու միջև, ինչ որ ցանկալի կնկատեմ ես՝ միշտ մնալով աղոթող վասն ազգություններու միջև խաղաղ գոյակցության և բարեկամության:

Ես կուզեմ հուսալ, որ պիտի գա օրը, երբ հայ և թուրք ժողովուրդները միատեղ պիտի աղոթեն 1915 թվականի մեր նահատակներու համար:

Ձերդ գերապանցություն, ընդունեցեք վերստին իմ ամենաջերմ երախտագիտությունը այս սքանչելի ընդունելության համար, որ պիտի մնա իմ կյանքի ամենաանմոռանալի օրերեն մին:

Խնդրեմ ընդունեցեք նաև իմ սրտաբուխ մաղթանքները և օրհնությունը Ձեր քաջառողջության և ընտանեկան երջանկության համար:

Թող բարին Աստված միշտ լուսավոր պահպանե ֆրանսիական հայրենիքը՝ քաղաքակրթական առաքելության իր պատմական ճանապարհի վրա:

Թող ողորմածն Աստված օգնական դառնա Ֆրանսիային և մեր օրերու պետություններուն, որպեսզի անոնք փնտրեն ու գտնեն ճանապարհը աշխարհի խաղաղության և ազգություններու միջև համերաշխ գործակցության պահպանման:

Իմ և մեր բոլորիս սպասումը պետք է ըլլա, որ իրականանա Եսայի մարգարեի տեսիլքը, խորտակվին պատերազմի կենքերը և անոնցմով պատրաստվին աշխատանքի գործիքներ, և խաղաղությունն ու արդարությունը ողջագուրվին:

Իբրև Հայրապետը Եկեղեցվո մը և ժողովուրդի մը, որ 1915-ի ցեղասպանության զոհ եղած են, իմ մշտատև աղոթքն է, որ ո՛չ մեկ ազգություն, ո՛չ մեկ տեղ նման ողբերգություններ չապրի հետայսու:

Այս լույս քաղաք Փարիզին և համայն Ֆրանսիային կմաղթիմ հարաճուն վերելք ու ծաղկում՝ խաղաղության մեջ:

Իսկ Ձերդ Գերապանցության՝ տոկուն քաջառողջություն, լիակատար հաջողությամբ Ձեր հայրենաշեն առաքելության ճամփուն վրա:

Թող Աստված լուսավորե Ձեր կյանքը և առաջնորդե Ձեզ Սուրբ Հոգվով: Ամեն:

Այնուհետև պատասխան խոսքով հանդես է գալիս Փարիզի քաղաքագլուխ Ժակ Շիրակը:

## ՓԱՐԻԶԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ ԺԱԿ ՇԻՐԱԿԻ ԽՈՍՔԸ ՃԱՇԿԵՐՈՒՅԹՈՒՄ

Ձերդ Սրբություն,
Սրբական Հայրեր,
Պարոնայք,

Լատինական Ամերիկայի հայկական համայնքներին տված Իր երկարատև և արդյունավետ այցելությունից հետո, Ձերդ Սրբությունը մի անգամ ևս պատվում է Փարիզը Իր այցելությամբ: Փարիզի քաղաքապետարան Ձեր նախորդ այցելությունից ուղիղ հինգ տարի հետո, ինձ բախտ է վիճակվում նորից ընդունել Ձեզ այստեղ և վերանորոգված ջերմությամբ մատուցել Ձեզ Փարիզի ժողովրդի հարգանքը, որ աշխարհի չորս ծագերին սփռված հայ ժողովրդի

ծառայության համար Ձերդ Սրբության ստանձնած պատասխանատու բարձր պաշտոնի մեջ տեսնում է մեկն այն հոգևոր առաքելություններից, որոնք էական են մարդկության բարօրության համար, մարդկություն, որ այսօր այնքան կարիք ունի լույսի և հույսի:

Ձեր այցելությունը Ֆրանսիա առանձնահատուկ նշանակություն է ստանում, որովհետև իր հավատքի համար մարտիրոսացած, ատելության կոհ դարձած և հալածանքներից կոտորված ձեր համայնքը Ֆրանսիայո՛ւմ է հատկապես, որ գտավ եղբայրական ջերմ ապաստան ոչ հեռավոր անցյալում:

Դառնալով Արևմտյան Եվրոպայի կարևորագույն համայնքներից մեկը, ձեր համայնքը հիանալիորեն մերվեց մեր ապգի մեջ՝ պահպանելով հանդերձ իր ոգեկանությունը, իր մշակույթը, իր անցյալին կապված մնալու հպարտությունը: Ձեր հոգևոր առաջնորդները մեծ դեր կատարեցին հայկական ինքնության պահպանման գործում, առաջնորդներ, որոնց առաջին շարքում ես կցանկանայի ողջունել գերաշնորհ Գյուտ եպս. Նագգաշյանին՝ Փարիզի հայոց նոր առաջնորդին, որը հաջորդեց հանգուցյալ Սերովբե արք. Մանուկյանին, որի նախանձախնդրությունը, վեհանձնությունն ու անձնվիրությունը անջնջելի են մնում բոլորի հիշողության մեջ:

Ես կցանկանայի ողջունել նաև ներկայությունը հայ կաթողիկե էգզարխ Նապրոյան սրբազանի, որի հետ մենք կապված ենք թանկագին բարեկամությամբ և որի հոգեկան ճառագայթումը պատիվ է բերում իր համայնքին:

Ես ուզում եմ իմ շնորհակալությունը հայտնել նաև վերապատվելի Ամոնյանին, որը ներկայացնում է այստեղ ավետարանական հայ համայնքը:

Նրանց ներկայությունը Ձերդ Սրբության կողքին, ինչպես նաև ներկայությունը Փարիզի հայոց եկեղեցական վարչական խորհրդի, որի նախագահն է պարոն Արմեն Բարսեղյանը, վկայում է այն միահամուռ ուրախությունը, որ Ձեր այցելությունն առաջացրեց և որից օգտվում է այսօր Փարիզը այնպիսի հանգամանքներում, որոնց թարգմանն եմ հանդիսանում ես սիրով՝ վստահեցնելով Ձեզ այն խոր և ակնածալից հարգանքի մասին, որ Ձերդ Սրբությունը վայելում է մեր ժողովրդի մոտ անվերապահ կերպով: Քանզի Ֆրանսիան նույնպես, ինչպես ձեր ժողովուրդը, հիշողություն չունեցող մի ժողովուրդ չէ: Նա շատ լավ գիտի, որ ձեր համայնքը, անխախտ պահպանելով վառ հայրենասիրության առաքինությունները, ամենասվնիվ նվիրվածություն հանդես բերեց՝ չխնայելով թափել անգամ իր արյունը իր հյուրընկալ հայրենիքի համար, երբ մեր ապատությունները սպառնալիքի տակ էին գտնվում համաշխարհային երկու պատերազմների ժամանակ:

Շատ բնական էր ուրեմն, որ ես, իբրև Փարիզի քաղաքագլուխ, ընդառաջելով ֆրանսահայոց համայնքի բոլոր ներկայացուցիչների խնդրանքին, հնարավորություն տայի մեր մայրաքաղաքի հարմարագույն մի վայրում կառուցելու մի հուշակոթող, որը կխորհրդանշի ձեր հավատարմությունն ու բարեպաշտությունը, որոնք հավերժորեն արձանագրված կմնան քարի մեջ, փշրված սի խաչի ձևով: Որովհետև ձեր հեռավոր հայրենիքի գաղափարը—խաչված և բազմախորհուրդ մի հայրենիք—մնում է ձեզանից յուրաքանչյուրի հոգում: Այդ ցավագին գաղափարը, սակայն, ձեզ բնավ չի արգելում կառուցելու ձեր ապագան, ձեր բազմադարյան պատմությունից շատ տարբեր մի ապագա, որ դուք դարբնում եք սերնդե-սերունդ՝ ոգեշնչվելով ձեր պատմական լինելության ակունքներից:

Այսքան պայծառ մի խիզախության դեմ հանդիման, հանուն փարիզաբնակ ժողովրդի, ես ուզում եմ խոնարհվել հավատքի այն մեծ վկայության ա-

Փարիզ քաղաքի ոսկեզօծ մեծ մեդալը

ռաջ, որ մարմնավորում է Ձերդ Սրբությունը: Այս ոգով և այս հույսով է, որ, իբրև բարեկամության և հարգանքի առհավատչյա, հանձնում եմ Ձերդ Սրբությանը Փարիզ քաղաքի ոսկեզօծ մեծ մեդալը:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Հունիսի 5-ին, երեքշաբթի օրը,** Փարիզի հայոց առաջնորդարանում Նորին Սրբությանն են այցելում՝

— «Երկիր և մշակույթ» կազմակերպության ներկայացուցիչները՝ գլխավորությամբ Գեղամ Գևորգյանի:

— «Հայ վավերագրական կենտրոնի» նախագահ Միշել Բաղամյանը:

— «Հայ աղքատախնամ ընկերության» և «Հայկական Ռադիո Ապգի» պատասխանատուներ Ժակ Քալջյանը, Անդրե Եդիքարտաշյանը, Սարգիս Սիմոնյանը և Տարոն Պողոսյանը:

— Հայ հասարակական գործիչներ Հանրի Փափազյանը, Կարպիս Հակոբյանը և Օննիկ Ալթունյանը:

— «Հայ ազգային շարժումի» անդամներ Արա Թորանյանը, Աբիկ Չաքըրյանը, Մարտիրոս Փափազյանը և Թորոս Ալաճաճյանը:

— Իսի լե Մուլինոյի քաղաքագլուխ Անդրե Սանդինին և իր օգնական Մարտիրոս Գարակյոզյանը:

— Հ. Բ. Ը. Միության ներկայացուցիչներ Եդվարդ Արամյանը, Խաչիկ Տարաքճյանը և Արթո Համբարձումյանը:

*
* *

**Հունիսի 6-ին, չորեքշաբթի օրը,** Վեհափառ Հայրապետին են այցելում՝

— Ֆրանսիայի հեռուստատեսության երկրորդ կայանի և «Հայկական Ռադիո Ապգի» թղթակիցները:

— «Լա Կրուա» օրաթերթի թղթակիցը և հարցազրույց ունենում Նորին Սրբության հետ:

— Թեհրանի համալսարանի դասախոս, բնագետ Գագիկ Հովակիմյանը:

*
* *

**Նույն օրը,** ժամը 14-ին, Փարիզի «Պլաս Աթենե» հյուրանոցի ճաշասրահում Վեհափառ Հայրապետին ճաշկերույթով պատվում է Մայր Աթոռի բարերար պրն. Վահրամ Դավիթխանյանը:

*
* *

**Նույն օրը,** առաջնորդարանի սրահում, Հայոց Հայրապետը հանդիպում է ունենում Ֆրանսիայի հայոց թեմի կանոնադրության հանձնաժողովի անդամներ Տ. Գյուտ եպս. Նագգաշյանի, դոկտ. Կյոնճյանի, իրավաբաններ Արա Բարսեղյանի և Էմիլ Ասլանյանի հետ:

Հանդիպման ընթացքում տեղի է ունենում խորհրդակցություն Ֆրանսիայի հայոց թեմի նոր կանոնադրության կազմության հարցի շուրջ:

Վեհափառ Հայրապետը հանձնաժողովի անդամներին տալիս է Իր ցուցումներն ու խորհուրդները:

*
* *

**Հունիսի 8-ին, ուրբաթ օրը,** Փարիզի հայոց Մայր եկեղեցում Վեհափառ Հայրապետը հանդիպում է ունենում ֆրանսահայ գաղութի երեք շրջաններից (Փարիզի, Լիոնի, Մարսելի) եկած եկեղեցական մարմինների շուրջ վաթսուն ներկայացուցիչների հետ՝ ի գլուխ Տ. Գյուտ, Տ. Հակոբ և Տ. Նորվան եպիսկոպոսների:

Օրակարգում դրված էին մի շարք հարցեր Ֆրանսիայի հայոց թեմական կազմակերպության կառույցի մասին:

Նորին Սրբությունը այս առթիվ նույնպես տալիս է Իր հայրապետական ցուցումներն ու խորհուրդները:

Հավարտ հանդիպման, առաջնորդարանի ճաշասրահում տեղի է ունենում ճաշկերույթ, որը կազմակերպել էր Փարիզի Տիկնանց Հանձնախումբը:

**Նույն օրը** Վեհափառ Հայրապետին է այցելում ժնևաբնակ ազգային գործիչ պրն. Մկրտիչ Շելեֆյանը:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Հունիսի 9-ին, շաբաթ օրը,** Վեհափառ Հայրապետին են այցելում սփյուռքահայ ծանոթ գրող Անդրանիկ Ծառուկյանը և Փարիզի հայոց եկեղեցական վարչության անդամ Կարպիս Զրբաշյանը:

*
* *

**Նույն օրը,** ժամը 12-ին, Հայոց Հայրապետին է այցելում երաժիշտ Արա Պարթևյանը՝ իր տիկնոջ հետ:

*
* *

**Նույն օրը,** ժամը 13-ին, Վեհափառ Հայրապետին է այցելում Ժնևի հոգևոր հովիվ Տ. Վիգեն վրդ. Այքալյանը:

**Նույն օրը** Նորին Սրբությունն ընդունում է այցելությունը լիբանանահայ հասարակական գործիչ, իրավաբան Հրաչ Սեդրակյանի:

**Նույն օրը,** երեկոյան ժամը 20-ին, Վեհափառ Հայրապետին Փարիզի իրենց բնակարանում ընթրիքով պատվում են տեր և տիկին Համապասպ և Ալիս Մոմճյանները:

## ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ ԻՍԻ ԼԵ ՄՈՒԼԻՆՈՅԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

**Հունիսի 10-ին, կիրակի:** Հոգեգալուստ:

Այսօր, առավոտյան ժամը 11-ին, Իսի լե Մուլինոյի հայոց Ս. Աստվածածին եկեղեցում ս. պատարագ է մատուցում Մայր Աթոռի միաբան և Հայոց Հայրապետի գավազանակիր Տ. Ասողիկ աբեղա Արիստակեսյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

«Հայր մեր»-ից առաջ հոգեշունչ քարոզ է խոսում Նորին Սրբությունը՝ վեր հանելով Հոգեգալստյան տոնի նշանակությունը և նրա հոգևոր ներգործությունը մեր ժողովրդի վրա նրա պատմության ընթացքում:

Հավարտ պատարագի տեղի է ունենում մատաղի օրհնություն՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի:

**Նույն օրը,** ժամը 16-ին, Փարիզի «Վեստմինստեր» հյուրանոցի ճաշասրահում Վեհափառ Հայրապետին ճաշկերույթով պատվում է Մայր Աթոռի բարերար պրն. Արշամ Բաբայանը:

Ճաշկերույթի ընթացքում Հայոց Հայրապետը, ի գնահատումն պրն. Բաբայանի եկեղեցանվեր ծառայության, նրա կուրծքը զարդարում է Ս. Գրիգոր Լուսավորչի շքանշանով:

Այս առթիվ հարգարժան բարերարը հանդես է գալիս շնորհակալական հետևյալ խոսքով.

«Սրտագին շնորհակալությամբ և երախտագիտությամբ լսեցի Վեհափառ Հայրապետի խոսքերը, որոնց համար խորապես զգացված եմ: Անձիս նկատմամբ եղած պատիվը, մանավանդ Ս. Գրիգոր Լուսավորչի շքանշանին հանձնումով և այդ ալ անձամբ Ամենայն Հայոց Հայրապետի ձեռքով, ինձի կպարգևե երջանկության կրկնակի առիթներ:

Առաջին հերթին՝ ուրախ կզգամ ինքզինքս այն համոզումով, թե իմ կատարած փոքր ծառայությունը Ս. Էջմիածնի դարավոր Մայր Աթոռին հանդեպ նկատված է օժանդակ ձեռնարկ, որ այս բարձրագույն շքանշանով կգնահատվի Վեհափառ Հայրապետին կողմե, ծառայություն մը, զոր քաղցր պարտականություն նկատած եմ միշտ հայոց Մայր Աթոռին հաստատ ու անսասան տևականացման ի նպաստ՝ նկատելով անոր պատմական ու դրական դերը Հայաստանի և սփյուռքի հայ ժողովուրդին համար:

Երկրորդ՝ այս առիթը իմ ուսերուն վրա կդնե հանրային պարտականություններուս շարունակությունը, ինչ որ ես արդեն ստանձնած եմ մեր եկեղեցիեն ներս՝ շեշտը դնելով ի մասնավորի արվեստի և երաժշտական գործունեության վրա: Ի վերջո յուրաքանչյուր անհատ կընե այն, ինչ որ իր կարողություններուն մեջ կիյնա:

Ուրեմն, Վեհափառ Տեր, վստահ եղեք, որ չափազանց պատված ու քաջալերված կզգամ ինքզինքս, և առ այդ այսօր կբավմապատկվին իմ ուժերը, զորս պատրաստ եմ Ձեր, Ս. Էջմիածնի և իմ հայրենիքի տրամադրության տակ դնելու այնքան ատեն, Վեհափառ Տեր, որ հնարավոր է ինձի:

Ձեր անձը տարիներե ի վեր քայլ առ քայլ փայլը ավելցուց Մայր Աթոռին, և անկե մեկի հանող լուսափայլ ճառագայթները ջերմացուցին նաև մեկ և ամբողջ սփյուռքահայությունը:

Կեցցե՛ մայր հայրենիքը, կեցցե՛ Ս. Էջմիածնի Մայր Աթոռը և անոր արժանընտիր գահակալը՝ Տ. Տ. Վազգեն Առաջին Ամենայն Հայոց Հայրապետը»:

**Նույն օրը,** երեկոյան ժամը 21-ին, Վեհափառ Հայրապետը սիրով ներկա է գտնվում Մարսելից Փարիզ ժամանած Ս. Սահակ-Մեսրոպ երգչախմբի համերգին՝ դեկավարությամբ երաժշտագետ խմբավար պրն. Խաչիկ Ելմալյանի:

Հայտագրում տեղ էին գտել հայկական ժողովրդական երգեր, ինչպես նաև արևմտաեվրոպական դասական երաժիշտների ստեղծագործություններ:

Համերգի վերջում երաժիշտ կատարողներին ուղղված գնահատանքի սրտառուչ խոսք է ուղղում Վեհափառ Հայրապետը՝ շեշտելով կոմիտասյան երաժշտության ազգային ոգին անաղարտ պահպանելու կարևորությունը ժողովրդական երգերի կատարման մեջ և ապա ներկաներին տալիս է Իր հայրապետական օրհնությունը:

*
* *

**Հունիսի 11-ին, երկուշաբթի օրը,** Վեհափառ Հայրապետին է այցելում Հ. Բ. Ը. Միության ցկյանս նախագահ մեծահարգ տիար Ալեք Մանուկյանը՝ իր դուստր Լուիզ Սիմոնի հետ:

Վեհափառ Հայրապետի և տիար Ալեք Մանուկյանի միջև տեղի է ունենում ջերմ զրույց և մտքերի փոխանակում Հայ Եկեղեցուն և ժողովրդին հուզող մի շարք հարցերի շուրջ:

**Նույն օրը** Նորին Սրբությանն են այցելում նաև Ալֆորվիլի հայոց եկեղեցու վարչության անդամները՝ գլխավորությամբ տեղի հոգևոր հովիվ Տ. Ներսեհ ծայր. վարդապետ Փապուճյանի:

Ավելի ուշ, երեկոյան ժամը 21-ին, Վեհափառ Հայրապետին իր բնակարանում ընթրիքով պատվում է Իսի լե Մուլինոյի հայոց եկեղեցու վարչության ատենապետ պրն. Սարգիս Պետոյանը:

Ընթրիքին ներկա էին տիար Ալեք Մանուկյանը՝ իր դստեր հետ, ֆրանսահայ հանրահայտ բեմադրիչ Հանրի Վեռնեոյը (Աշոտ Մալաքյան) և իր տիկինը, տեր և տիկին Արմեն Բարսեղյանները և տեր և տիկին Գործունյանները:

*
* *

**Հունիսի 12-ին, երեքշաբթի օրը,** Լոնդոնից Վեհափառ Հայրապետին է այցելում Մայր Աթոռի բարերար պրն. Ժորժ Քյուրքճյանը:

**Նույն օրը** Վեհափառ Հայրապետին են այցելում նաև տեր և տիկին Ժան Ապաճյանները՝ Բրյուսելից:

Վեհափառ Հայրապետի և պրն. Ապաճյանի միջև տեղի է ունենում զրույց Բրյուսելում հայկական եկեղեցու կառուցման հարցի շուրջ:

**Նույն օրը** Միլանոյից Վեհափառ Հայրապետին են այցելում Միլանոյի հայոց եկեղեցու վարչության անդամներ՝ դոկտ. Ալեքսանյանը, պրն. պրն. Հրանտ Բամբակյանը և Արտավազդ Սրապյանը:

## ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ ՓԱՐԻԶԻ «ԷՆՏԵՐԱԼԻԵ» ՄԻՈՒԹՅԱՆ ՍՐԱՀՈՒՄ

**Նույն օրը,** երեկոյան ժամը 20-ին, Փարիզի «Էնտերալիե» միության սրահում տեղի է ունենում համագաղութային ճաշկերույթ՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի:

Ճաշկերույթին ներկա էին Տ. Գյուտ եպս. Նագգաշյանը, գերապայծառ Գրիգոր եպս. Կապրոյանը, Հ. Բ. Ը. Միության ցկյանս նախագահ տիար Ալեք Սանուկյանը՝ իր դստեր հետ, Փարիզի հայոց եկեղեցու հոգևոր դասը, եկեղեցական վարչության անդամները, բազմաթիվ հրավիրյալներ՝ եկած Միլանոյից, Շվեյցարիայից, Արևմտյան Գերմանիայից և Ֆրանսիայի տարբեր շրջաններից՝ շուրջ 400 հոգի:

Ճաշկերույթի ընթացքում ողջույնի սրտագին խոսքով առաջինը հանդես է գալիս Տ. Գյուտ եպս. Նագգաշյանը և ներկաներին առաջարկում առաջին բաժակով հոտնկայս խմել Նորին Սրբություն Վեհափառ Հայրապետի կենացը՝ արևշատություն մաղթելով Նրան:

Հանուն Փարիզի հայոց եկեղեցու վարչության՝ խոսք է առնում վարչության նախագահ իրավաբան Արմեն Բարսեղյանը՝ ասելով.

«Վեհափառ Տեր,

Նախ կուզեմ Ձերդ Սրբության հայտնել Փարիզի Մայր եկեղեցվո վարչության երախտագիտական զգացումները, որ հաճեցաք անգամ մը ևս այցելել մեր գաղութին:

Ամեն անգամ Ձերդ Վեհությունը կայցելե մեր գաղութին, նույնիսկ հոգ չէ թե կարճ ժամանակով, ան կվերագտնե իր ներդաշնակությունը և սրտակցությունը:

Հարավային Ամերիկայի մեր հայրենակիցները Ձեզ հայտնած են, թե Ձեր այցելության դրական արդյունքները իրենց համար տասը տարի կտևեն: Մենք սակայն այդքան տարիներու կարիքը չենք զգար, քանի որ բախտավորությունը կունենանք հաճախ Ձեզ այստեղ ընդունելու և ստանալու Ձեր շնորհաբեր օրհնությունը և պատգամը:

Կփափագիմ հիշել այստեղ, թե ինչ հայրական զգացումներով ընդունեցիք մեզ վերջերս Սուրբ Էջմիածնի մեջ, ուր երջանկությունն ունեցանք վայելելու Ձեզ և հարստանալու Ձեր ուժեղ և պայծառ անձնավորութենեն: Այդ առթիվ ավելի լավ հասկցանք, թե ինչու հայրենիքի մեջ թե արտասահմանի՝ ամբողջ հայությունը Ձեզ կպաշտե և կընդունի որպես ամենուս ոչ միայն հոգևոր Առաջնորդը, այլև ազգային Առաջնորդը: Այդ այցելության ընթացքին զգացինք, թե որքան մոտեն կհետաքրքրվիք Ֆրանսայի մեր եկեղեցիով, կսիրեք զայն և իր համեստ ծառայողները՝ հորդորելով զանոնք, որ միշտ հավատարիմ մնան մեր Մայր Եկեղեցվոյն՝ Սուրբ Էջմիածնին:

Սուրբ Էջմիածնեն մենք վերադարձանք կրկնապատկված ուժերով՝ ավելի կորովով և կամքով մեր պարտականությունները կատարելու:

Ամենեն կարևորն էր մեր նոր առաջնորդին ընտրությունը: Բախտը ունեցանք միացյալ կամքով ընտրելու Տ. Գյուտ եպիսկոպոս Նագգաշյանը:

Վեհափառ Տեր, մեր գաղութի ապագայի մասին լավատես ենք: Մեր առաջնորդի գործակցությամբ պիտի դիմագրավենք գաղութիս նոր հարցերը և պիտի ջանանք կորովով պահպանել գաղութիս միասնական ոգին, հատկապես ներկա փոթորկալից աշխարհին մեջ:

1965-են ի վեր Արևմտյան Եվրոպայի մեր հոգեկան կաթողիկոսական

պատվիրակը՝ Տեր Սերովբե արքեպիսկոպոս, հաջողած էր միության ոգի մը ստեղծել Ապրիլյան Եղեռնի ոգեկոչումներու առթիվ: Այս տարի մեր երիտասարդության և բոլոր կալվակերպությանց մասնակցությամբ հաջողեցանք նորեն միասնական կերպով ապրիլ 24-ը ոգեկոչել:

Կապրինք հյուրընկալ երկրի մը մեջ, որ մեզ կհարգե, կճանչնա մեր ինքնությունը, կճանչնա մեր ժողովուրդին արդար դատը: Պետք է ջանալ ֆրանսացի ժողովուրդին բարեկամությունը պահպանել՝ նոր հաջողություններու ակնկալությամբ:

Վեհափառ Տեր, հանուն ֆրանսահայ մեր ժողովուրդին՝ թույլ տվեք մաղթել Ձեզի երկար տարիներու հովվապետություն, որպեսզի Ձեր իմաստուն ղեկավարությամբ մենք զգանք զմեզ ապահով և շարունակենք պահպանել մեր ժողովուրդին միասնական սիրո գործակցությունը»:

Այնուհետև սրտառուչ խոսքով հանդես է գալիս Հ. Բ. Ը. Միության ցկյանս նախագահ տիար Այեք Մանուկյանը՝ ասելով.

«Վեհափառ Տեր,

Այսօր մեծ բացակա մը կա այս սրահին մեջ. ամեն անգամ, որ այցելեինք Ֆրանսա, մեր դիմաց կտեսնեինք միշտ մեր Եկեղեցվո իշխաններեն Սերովբե արք. Մանուկյանը: Այսօր մեր առաջին այցն է Ֆրանսա, ուր ալ բախտ չունինք հանդիպելու իրեն, տեսնելու իր խոհուն դեմքն ու խոսելու իր հետ մեր Եկեղեցվո ցավերուն և ապագային մասին:

Կուզենք մեր խոսքը սկսիլ մեր հարգանքն ու սերը արտահայտելով Սերովբե արքեպիսկոպոսի հիշատակին: Աստված լուսավորե հոգին:

Երկար և սպառիչ հովվական շրջապտույտ մը վերջ, դեպի Մայր Աթոռ իր վերադարձի ճամփուն վրա, Վեհափառը պահ մը կանգ կառնե՝ Եվրոպայի Իր հոտին մոտ՝ հոգեկան նոր ներշնչում, հավատք ու խանդավառություն ներշնչելու այս ափերուն վրա գտնվող Իր զավակներուն:

Բոլորս ալ բախտավոր կզգանք Վեհափառ Հայրապետի օրինաբեր այցելությամբ: Անոր ներկայությունը, հայրապետական խոսքն ու օրհնությունները մեր կորովին, ուժին, հավատքին ու հաջողությանց անհրաժեշտ տարրերն են: Ան Իր առաքինապարդ անձին հետ մեզի կբերե դարավոր հաստատություն մը՝ Սուրբ Էջմիածինը, ինչպես ամբողջ Հայաստանը՝ իր երգերով, իր հույսերով, իր տեսիլքներով և իր ապագայով:

Մեր ներկա դարուն Վազգեն Առաջին Կաթողիկոսը անձ մը ըլլալե ավելի՝ երևույթ մը հանդիսացավ ու նաև խորհրդանիշ մը մեր դարավոր Եկեղեցիին վերածնունդին ու պայծառության: Հակառակ կարգ մը գաղութներու մեջ պարզված բազմաթիվ տխուր երևույթներու, Էջմիածինը կապրի իր նոր ոսկեդարը, շնորհիվ անոր Գահակալին իմաստության, նվիրումին և առաջնորդության:

Վստահաբար մեզի նման շատ մը ուխտավորներ իրենց աչքերով հաստատած են Սուրբ Էջմիածնի մերօրյա փառքը: Այնքան շինարարություն և այնքան լուսավորություն կտիրե Սուրբ Էջմիածնի շրջափակին մեջ, որ կարծեք մեր նախահայրերուն ոգիները իջած են այնտեղ ու մեր Հայրապետի բարի հայացքին տակ կկերտեն անդուլ՝ կուտակված վրեժը առնելու համար կորսված դարերու ավերներուն:

Ամեն հայ կարծեք ժամանակի զսպանակ մը ունի իր մեջ և ունի գիտակցությունը մեր մեծ կորուստներուն: Անոր համար ալ կուզե շատ կերտել և շուտ կերտել: Այս երևույթը մասնավորաբար տեսանելի ու շոշափելի է Հայաստանի

մեջ, և այդ շինարարության ամենեն ներշնչող խորհրդանիշը նույնինքն մեր Վեհափառն է:

Ինչպիսի՜ հպարտություն էր մեզի տեսնել այն հարգանքն ու համակրանքը, զորս մեր Վեհափառը կվայելե հայրենի պետության ու ժողովուրդին մոտ:

Միևնույն համատարած հարգանքը և հիացումը կտիրեն նաև արտասահմանի մեջ, ուր պարբերաբար մեր Հայրապետը այցի կուգա՝ իջնելով սուրբ Գրիգոր Լուսավորչի գահեն:

Որքան բարիք, լուսավորություն, հավատք, շինարարություն ու համերաշխություն բաշխեց մեր Հայրապետը Իր աշխարհացրիվ հոտին, կարծեք այնքան վիշտ, անհասկացողություն ու տագնապ տեսավ Ան Իր գահակալության տարիներուն: Սակայն Ան շարունակեց հավատալ մեր Եկեղեցվո միության և ապագային և շարունակեց հորդորել եղբայրություն և համերաշխություն:

Մեծերու հատուկ սրտառուչ երևույթ է չընկրկիլ փոքրություններու ու ժամանակավոր ցնցումներու դիմաց և վանոնք դիմակալել պատմության ուժով: Այդպես ալ շարժեցավ ու գործեց Վեհափառ Հայրապետը՝ Իր ներշնչումը ստանալով անցյալեն և Իր պայծառ հայացքը ուղղելով վաղվան լուսավոր հորիզոններուն:

Այսօր ևս մեր ժողովուրդը իր Հայրապետին կնայի եկեղեցական տագնապներու լուծման համար: Գիտենք, թե անոնցմե շատերուն լուծումը կարծվածին չափ դյուրին չէ, սակայն միայն Ինք կրնա լուծել վանոնք. ատոր համար ալ իր հոտը կաղոթե իր Հայրապետին առողջության ու զորության համար, որպեսզի Ան Իր արդար խոսքն ըսե և տնօրինումը կատարե մեր հոգևոր կյանքը հուզող հարցերուն շուրջ:

Այդ հարցերեն մեկը մեր Եկեղեցվո բաժանման տխուր երևույթն էր, որ հավիվ մեղմացած՝ մեր ազգային կյանքը պղտորվեցավ նոր տագնապով մը, որ սկիզբ կառներ Երուսաղեմի մեջ և կալեկոծեր ամբողջ հայությունը:

Գիտակից ենք, թե ինչպիսի՜ վիշտ կպատճառեն այս երևույթները մեր Վեհափառին. սակայն Ան ոչ միայն կդիմանա այդ վիշտին, այլ նաև հորդոր կըկարդա Իր հոտին՝ ամուր մնալու փորձության օրերուն: Ու մենք բոլորս, Իրմով գոտեպնդված, միշտ կցանկանք բարին, միշտ կհուսանք գտնել ճշմարիտը և անոնցմով առաջնորդել մեր կյանքը արտասահմանի մեջ:

Մեր հոգևոր կյանքի կարգ մը տխուր և անմխիթար երևույթներուն դիմաց՝ կան նաև դրական երևույթներ, նույնինքն այստեղ՝ Ֆրանսայի մեջ: Կփափագիմ այս առիթով մատնանշել Ֆրանսայի վսեմաշուք նախագահին՝ պրն. Ֆրանսուա Միթերանի և իր կառավարության մարդասիրական կեցվածքը մեր անիրավված և արյունոտած դատին նկատմամբ: Հակառակ քաղաքական փոթորիկներուն, Ֆրանսա ասպետորեն կողքին կեցավ հայության՝ արժանանալով բոլորիս հարգանքին ու երախտիքին: Եվ այսօր մեր ժողովուրդը, իր Հայրապետեն մինչև ամենեն խոնարհ անդամը, կուգա իր գոհունակությունն ու շնորհակալությունը հայտնելու Ֆրանսայի ազնիվ ժողովուրդին և անոր արի նախագահին:

Մոտ ատենեն պիտի վերադառնա մեր Հայրապետը հայրենիք, ու երբ առանձնանա Ան սուրբ Գրիգոր Լուսավորչի գահուն վրա, նախ Անոր հայացքին դիմաց պիտի պարզվին ուրախ և տխուր դեմքերը սփյուռքի Իր զավակներուն, Անոր ականջներուն պիտի հասնին մեսրոպաձայն արտասանությունները հայ մանուկներուն, աղոթքները տառապյալ հայ մամիկներուն, ինչպես կորովի երգը հայ երիտասարդության. սակայն այդ բոլորին վրա տխուր մշուշի նման պիտի տարածվի տխրությունը մեր ազգային ու եկեղեցական կյանքի ցավերուն,

և Հայոց Հայրապետը, հին դարերեն Իրեն հասնող իմաստությամբ, պիտի խորհի մի առ մի լուծում գտնել այն հարցերուն, որոնք պարզված են Իրեն վերջին քանի մը ամիսներուն, և դարմանել այն վերքերը, որոնց ականատեսը եղած է Ան Իր ներկա ուղևորության ընթացքին: Ու մենք հեռուեն պիտի տեսնենք Հայոց Հայրապետը Իր գահուն վրա, Իր վիշտին և հույզերուն մեջ առանձին:

Մեր սրբազան լեռը՝ Արարատն ալ առանձին կանգնած է իր դարերու տառապանքին հետ և հույս կնեղշնչե աշխարհի երեսին ցրված հայության: Արարատը՝ որ պատմությունն է մեր ժողովուրդին, ճակատագիրն է անոր:

Կուզենք մեր խոսքը եզրափակել նույնինքն Վազգեն Հայրապետի մեկ հոգեւարար խոսքով, զոր Ինքն Իր ձեռքով արձանագրած է Արարատի քառասուն շքեղ լուսանկարները բովանդակող հատորին սկիզբը.

«...Եվ թող քառասուն Արարատներն այս
Խոսեն, բարբառեն քառասուն լեզվով
Հեռավոր պանդուխտ մեր զավակներին,
Դառնան ամենքի, ամենքի համար՝
Հրավեր հայրենյաց,
Կոչ արդարության:
Եվ ստուգություն գալիք հաղթությանց»:

Ճաշկերույթի ավարտին իր օրհնության խոսքն է ասում Նորին Սրբությունը.

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՓԱՐԻԶԻ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹՈՒՄ

Սրբազան և Գերապայծառ եղբայրներ և հոգևոր հայրեր, մեծահարգ տիար Այեք Մանուկյան, ազնիվ տիկին Մարթա Տիրապեքիրյան, մեծահարգ տիար Լեոն Գասպարյան, հարգարժան ներկայացուցիչներ Ֆրանսայի շրջանի եկեղեցական-ազգային մարմիններու և կազմակերպություններու, ներկայացուցիչներ մամուլի, հարգարժան ներկայացուցիչներ դրացի երկիրներեն եկած հայ համայնքներու, շատ հարգելի տիկիններ և տիարք սեղանակիցներ:

Բարին Աստված անգամ մը ևս հանդիսացավ ինձ օգնական և նեցուկ, որպեսզի ես կարողանամ իմ ուղևորությունը Հարավային Ամերիկա կատարել համաձայն նախատեսված ծրագրի: Այժմ կգտնվիմ վերադարձի ճամփուն վրա: Այնտեղ՝ Էջմիածին, հայաստանցի ժողովուրդի ծոցին մեջ ես տնապես կզգամ, որ իմ սիրտն ալ կիսված է, երկուքի բաժնված, ինչպես մեր ժողովուրդը այսօր, մեր չար ճակատագրի բերումով: Հայաստանցի թե արտասահմանցի հայեր գրեթե հավասար թիվ կկազմեն: Իբրև առաջին սպասավորը մեր ժողովուրդի, հոգեկան անհրաժեշտությունը կզգամ, երբեմն գոնե, դուրս ելել մեր հայրենիքեն, հանդիպիլ սփյուռքի մեր հայության, որպեսզի իմ սիրտս ամբողջանա: Ինձ համար այդ թե՛ հոգեկան մխիթարություն է և թե՛ դեպի լավատեսություն մղող ուժ: Այսպիսով, ես կզգամ ոչ միայն ամբողջությունը մեր ժողովուրդի, այլ նաև անոր միությունը, անբաժանելիությունը: Ճիշտ է, որ տարբերություններ շատ կան հայաստանցի ժողովուրդի կյանքի պայմաններուն և ձեր կյանքի պայմաններուն միջև: Նիստուկացի, ապրելակերպի, մտածելակերպի և այլ տարբերություններ: Բայց ասոնք ինձ համար երկրորդական, մակերեսային հանգամանք կներկայացնեն: Ես մեկ բանի մեջ համոզված եմ և ամեն անգամ

կիաստատեմ թե՛ այնտեղ՝ Հայաստանի, և թե՛ սփյուռքի մեջ. այն, որ մենք բոլոր հայերս նույն աղոթքներով կդիմենք ամ Աստված, նույն լեզուն կխոսինք, նույն երգերը կերգենք, նույն անցյալի հիշատակներով կապրինք, նույն մտահոգությունները ունինք, նույն ուրախությունը ունինք մեր այսօրվա հայրենիքի նվաճումներու համար և նույն երազանքները դեպի մեր առավել պայծառ ապագան:

Չե՞ք նկատեր, որ նահատակներու հիշատակը ևս, մանավանդ Եղեռնի 50-ամյակեն այս կողմ, դարձած է միարար հզոր գործոն, մեր ամբողջ ժողովուրդը ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի իրարու կապող ազգային գիտակցություն:

Մեր սուրբ նահատակներու հիշատակը դադրած է միայն սուգի և կոծի օր ըլլալե: Անիկա այսօր, մանավանդ ուխտի օր է, արդարության ղողանջ է և ստուգություն մեր հույսերու ապագա կենսագործման:

Ես Հայաստանեն կուգամ: Այս անգամ, ավելի քան ուրիշ անգամներ, կուզեմ մտահոգությամբ ներկայանալ ձեզի այսօրվա միջազգային կացության առնչությամբ, ոչ քաղաքական իմաստով: Ես քաղաքական մարդ չեմ և այդ մոտեցումով չէ, որ պիտի արտահայտվիմ: Ես պարզապես անդադար կաղոթեմ Էջմիածնի սուրբ սեղաններու առաջ, որպեսզի աշխարհի խաղաղությունը պահպանվի և ամրապնդվի, որպեսզի մեր վերածնած փոքրիկ հայրենիքի սահմաններուն պատերազմի կրակ չմոտենա: Կբավե ինչ որ պատահեցավ մեր ազգի գլխուն:

Մենք իրավունք ունինք ապրելու, վերաշինելու մեր հայրենիքը, ավելի հզորացնելու զայն և դիմելու դեպի առավել պայծառ ապագա: Պատերազմի և խաղաղության հարցերը հուզող հարցեր են այսօր ամեն տեղ երկրագունդի վրա: Գուցե ամեն ժողովուրդ, ամեն պետություն հասկնալի է, որ այդ հարցերուն մոտենա իր շահերու, իր նպատակներու տեսանկյունեն: Բայց մենք ալ, իբրև Եկեղեցի և ժողովուրդ, անհրաժեշտ է, որ մեր գիտակցված մոտեցումը ունենանք: Նախ, որպես քրիստոնյաներ, պարտինք մշտապես աղոթել վասն խաղաղության: Քրիստոսի Ավետարանը գրեթե իր առաջին էջեն մինչև վերջին էջը սիրո, մարդասիրության և խաղաղության կոչ մըն է՝ ուղղված բոլորիս: Բայց խաղաղության հարցը մեզի՝ հայերուս պետք է ծանրորեն հուզե նաև մեր ազգի հրամայական շահերու տեսանկյունեն: Մեզի համար պատերազմի և խաղաղության հարցը լինել չլինելու հարց է: Մի՛ մոռնաք երբեք մեր անցյալի փորձառությունը և մեր երկրի աշխարհագրական դիրքը, որ վճռական նշանակություն ունի ընդհանրապես որևէ ժողովուրդի ճակատագրի համար: Հետևաբար, անձանձրույթ պիտի աղոթենք «վասն խաղաղության ամենայն աշխարհի», վասն զինաթափության, վասն հսմերաշխ գործակցության բոլոր մեծ ու փոքր երկիրներու, Միացյալ Ազգերու Կազմակերպության արդար հովանիին ներքև:

Ես այս պահուս կհիշեմ մեր եկեղեցական մեծագույն դեմքերեն մեկուն՝ Մաղաքիա Օրմանյան պատրիարքի մեկ խորհրդածությունը իր նշանավոր «Խոհ և խոսք» գործին մեջ: Գիտեք բոլորդ, թե անոր պատրիարքության շրջանը ինչպիսի վտանգավոր շրջան եղած է սուլթան Համիդի օրոք: Մաղաքիա Օրմանյան պատրիարք, իր գործին մեջ կըսե. «Մեր ազգի նավը ալեկոծ փոթորիկի մը վրա կգտնվեր: Իմ ուժերես վեր էր փոթորիկը դադրեցնել: Իմ միակ իրաձը և ճիգը եղավ, որ այդ ալեկոծության մեջեն մեր ազգի նավը անխորտակ պահենք և հասցնենք խաղաղ նավահանգիստ»: Ես կխորհիմ, թե մենք այսօր

ալ նույն խորհրդածությունը կրնանք կատարել այսօրվա այս ալեկոծ աշխարհի մեջ:

Առաքինապարդ Հովվապետը հայոց

Այսօր մեր Առաքելական ս. Եկեղեցին և մեր ամբողջ ժողովուրդը ի Հայաստան բարեբախտաբար խաղաղ ու ապահով վիճակի մեջ են, մշտապես վերելքի ճամփու վրա: Իսկ եթե պահ մը հաշվի չառնենք երկու հայահոծ գաղութներու վիճակը վերջին տասը տարիներուն, գաղթաշխարհի եկեղեցական-ազգային կյանքը նույնպես խաղաղ ու բարվոք վիճակի մեջ կգտնվի: Այս վկայությունը ես կբերեմ նաև Հարավային Ամերիկայեն, ուրկե կուգամ, ուր ես տեսա, թե հերոսական ճիգեր ի գործ կդրվին, որպեսզի թե՛ եկեղեցական կյանքը կորանա և թե՛ կրթական գործը առավել ծավալ ստանա: Այնտեղ՝ Բուենոս Այրեսի մեջ, բացի քանի մը նախակրթարաններե, կան չորս միջնակարգ դպրոցներ՝ շուրջ 2500 աշակերտներով: Ասիկա մեծ նվաճում մը պետք է նկատել գաղթաշխարհի համար: Մոտավորապես նույն դրությունը կտիրե, ավելի քիչ աշակերտներով, Մոնտեվիդեոյի և Սան Պաուլոյի մեջ: Եվ իմ այցելության ժամանակ նոր մանկապարտեզներու և դպրոցներու հիմնարկեքներ կատարվեցան:

Կուզեի անգամ մը ևս ուշադրության հանձնել այն իրողությունը, ինչքան

ալ ցավալի նկատենք, որ այլևս հայկական գաղութները մնայուն իրականություն են: Մասնակի հայրենադարձություն, անշուշտ, կրնա տեղի ունենալ և հույժ ցանկալի է այդ: Բայց ամբողջական, վանգվածային ներգաղթ Եվրոպայեն և Ամերիկայեն դժվար թե կարողանանք ակնկալել: Այս հաստատումը պետք չէ մեկ վիատեցնե, հուսահատեցնե: Նախ այն պատճառով, որ միակ ժողովուրդը չենք, որ գաղթաշխարհ ունինք: Ուրիշ շատ ժողովուրդներ կան, որոնք ավելի մեծ թվով, ծավալուն գաղթականություն ունին արտասահմանյան երկիրներու մեջ: Հետո մենք՝ հայերս, փորձառությունը ունինք այս ասպարեզին մեջ: Պատմաբանները կըսեն, թե նույնիսկ 7-րդ դարեն գաղութներ ունեցած ենք: Օրինակի համար՝ այն երկիրը, ուր ես ծնած եմ, Ռումանիան: Հայ գաղթականություն հաստատված է այնտեղ 14-րդ դարեն սկսյալ: Այդ գաղթահայությունը փայլուն կյանք մը ապրած է հինգ հարյուր տարիներ շարունակ: Մեր ժողովուրդը պատմական փորձառությունը ունի գաղթավայրեր ունենալու, տոկալու և իր ինքնությունը պահպանելու և կազմակերպելու դարեր շարունակ: Հետևաբար, պետք է իրատես ըլլալ ու ինքնավստահ և երբեք չհուսահատվիլ: Եվ այդ հնարավորությունները կան: Քիչ առաջ կխոսեի տիար Մանուկյանի հետ, որ կհայտներ ինձ, թե Միացյալ Նահանգներու մեջ հարյուրավոր բազմամիլիոնատեր հայեր կան, որոնք, սակայն, տակավին չեն մոտենար ազգային մտահոգություններուն: Ահավասիկ, պետք է կազմակերպչական աշխատանք տանիլ, որպեսզի այդ հայորդիները քիչ մը արթննան, ճանչնան ինքզինքնին իբրև հայեր և կարողանան իրենց միջոցները տրամադրել, որպեսզի մեծ ծրագիրներ իրագործվին: Եվ այդ ծրագիրներեն մեկը պիտի ըլլար արտասահմանի մեջ հիմնե հայ դպրոցներու համար ուսուցիչներ պատրաստող կրթական հաստատություններ: Կուզեմ ձեզի հիշեցնել, որ ասկե հինգ տարի առաջ էր, երբ Լոնդոն կգտնվեի, սքանչելի պարսկահայ անձնավորություն մը՝ Թովմաս Թովմասյան անունով, Լոնդոնի մեջ ինձ ներկայացուց նման ծրագիր մը: «Արտասահմանի մեջ,—կըսեր ինք,—Անգլիո կամ ուրիշ երկրի մեջ անհրաժեշտ է հիմնել կրթական հաստատություն մը, որ արտասահմանի հայկական վարժարաններու համար ուսուցիչներ պատրաստե: Այնտեղ ուսանելու գան միջնակարգ դպրոցները ավարտածներ: Այդ երկրին տեղական մանկավարժական համալսարանները ուսանին, որպեսզի մանկավարժական թեքնիքը յուրացնեն, իսկ միաժամանակ այդ հաստատության մեջ հետևին հատուկ դասընթացքներու՝ հայոց լեզվի, հայ գրականության, հայոց պատմության և հայ մշակույթի պատմության, այդ նպատակավ Հայաստանեն հրավիրելով հայագետներ: Դրամը ունինք, տասը պարսկահայեր ենք՝ պատրաստ ծախսերը հոգալու: Հիմա անմիջապես ձեր տրամադրության տակ կարող ենք դնել մեկ միլիոն դոլար»: Տիար Թովմասյան խնդրեց, որ այդ մասին խոսիմ մեր հայրենի իշխանությանց, որպեսզի անոնք տրամադրեն հայագետ մասնագետներ: Իմ վերադարձին խոսեցա մեր վարչապետին հետ, որ սիրով ընդառաջեց: Եվ գործը շուտով գործնական ճամփու վրա պիտի դրվեր: Ես շատ ոգևորված էի: Սակայն Պարսկաստանի դեպքերը ամեն ինչ տակն ու վրա ըրին: Նման ծրագրի մը իրականացումը վճռական նշանակություն կրնար ունենալ արտասահմանի հայության ապագայի համար: Կխորհիմ, թե միայն Հ. Բ. Ը. Մ.-ը կրնա մտածել այսպիսի ծրագրի մը իրագործման համար: Կարծեմ դրամը պահելեն ավելի լավ է ծախսել և հայ կրթական մշակներ պատրաստել:

Արտասահմանի կյանքի գոյատևման հիմնական խարիսխը ես կնկատեմ, անշուշտ, պատմականորեն նվիրագործված և հաստատված մեր Հայ Առաքելական ազգային Եկեղեցին: Այսօր ամենուրեք ան տարածած է իր թևերը: Ուր

հայ համայնք կա, այնտեղ եկեղեցի կա, հոգևորականներ կգործեն, թեմական կազմակերպություններ կան: Սակայն եղածը ինձ չի բավարարեր տակավին: Մեր հոգևոր եղբայրները կաշխատին իրենց պարտականությունը կատարել իրենց ուժերու ներած չափով, սակայն թիվով քիչ են և երբեմն ալ համապատասխան որակը կպակսի: Հետևաբար, մեր պարտքը կնկատենք մեր ուժերը լարել, պատրաստել հոգևոր նոր սերունդներ, ավելի մեծ թիվով և ավելի որակյալ, որպեսզի դիմագրավենք այն հարցերը, որոնք կծառանան մեր առջև՝ կարողանալ պահպանելու համար գոյատևումը, կենդանի գոյատևումը մեր Եկեղեցիին: Մեր ժամանակներու մթնոլորտը ամբողջ աշխարհի մեջ երբեմն կմղե ոմանց խորհելու, թե Եկեղեցին, կրոնը իր ժամանակը ապրած է և արդեն դեպի վայրէջք կընթանա: Մեր կարծիքով՝ ասոնք ժամանակավոր և անցողական տպավորություններ են: Պատմության ընթացքին քրիստոնեական Եկեղեցին տարբեր երկիրներու մեջ, նույնիսկ Հռոմի մեջ ունեցած է տկարության շրջաններ: Բայց շատով Եկեղեցին վերագտած է իր կենսունակությունը, իր առաքելությունը, որովհետև Քրիստոսի Ավետարանը հավիտենական ճշմարտություններ կպարունակե, առանց որոնց մարդիկ այս աշխարհի վրա չեն կրնար ապրել հանգիստ և խաղաղ սրտով:

Մեր մեջ ալ Եկեղեցին տկարության շրջան ապրած է անցյալի մեջ, բայց այսօր կարող ենք խոսիլ Հայաստանի մեջ կրոնական զգացումի զարթոնքի մասին: Հետևաբար ձեզի և ձեր միջոցով բոլորին կոչ կուղղեմ, որ մնաք հավատավոր քրիստոնյաներ, հավատարիմ կավակները մեր Առաքելական Մայր Եկեղեցիին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ պատմական կեդրոնը մեր քրիստոնեական հավատքին: Հարցին մոտենալով նաև հայկական տեսանկյունեն, Հայ Եկեղեցվո հիմքերը ամրացնել՝ կնշանակե ամրապնդել հայության գոյատևումը արտասահմանի պայմաններու մեջ:

Երկու խոսք ալ Ֆրանսայի մեր եկեղեցվո վերաբերյալ: Այդ հարցին քիչ առաջ անդրադարձավ նաև տիար Բարսեղյան: Ֆրանսահայ համայնքը կգտնվի նոր հանգրվանի մը առջև այս պահուն: Ժամանակն է, որ ֆրանսահայ եկեղեցական կազմակերպությունը հաստատվի ավելի ամուր հիմքերու վրա՝ եկեղեցական կանոնական ու ժողովրդավարական սկզբունքներու կիրառման տեսակետեն: Այս ծրագիրը նոր չէ: Չորս տարի է ես խորհրդակցած եմ այս մասին հանգուցյալ Սերովբե արքեպիսկոպոսի հետ: Ինձ համար մեծ ցավ է, որ կորսնցուցինք վինքը և իր կենդանության օրոք չկրցանք իրագործել իր իսկ ցանկացած նպատակը: Բայց որոշ աշխատանք կատարված է և գրեթե իր լրումին հասած: Որոշ նախագիծ պատրաստված է այդեն, որուն ես ծանոթացա: Եկեղեցվո մեջ քանի մը օր առաջ ունեցանք խորհրդակցական ժողով մը, որուն մասնակցեցան ոչ միայն Փարիզի, այլև Լիոնի և Մարսելի եկեղեցական-վարչական մարմիններու բոլոր ներկայացուցիչները, նաև հոգևորականները՝ շուրջ 60 հոգի: Այնտեղ ես ուրվագծեցի այն կառույցը, որ ապագային կխորհիմ, թե պետք է ունենա ֆրանսահայ եկեղեցական թեմական կազմակերպությունը Orgnaisation diocésaine de l'Eglise apostolique arménienne de France անվան տակ: Կխորհիմ, թե սկսված այս աշխատանքը պիտի շարունակվի համերաշխ գործակցությամբը բոլորին և իր լրումին հասնի առավելագույն մեկ տարվան ընթացքին: Կանոնադրությունները պետք է կազմվին իրենց վերջնական ձևին մեջ ու Մայր Աթոռ ուղարկվին ի հայրապետական հաստատում:

Վերջացնելե առաջ իմ խոսքը՝ Հարավային Ամերիկայի իմ տպավորու-

թյուններեն կհաստատեմ, որ արտասահմանի հայության կյանքի և գոյատևման հիմքերը պետք է նկատել հետևյալները.

ա. Հայ Առաքելական Եկեղեցվո առավել զորացում, իբրև մեկ ազգ, մեկ Եկեղեցի և մեկ ամենայն հայոց հայրապետություն ի Ս. Էջմիածին:

բ. Կրթական գործի աստիճանաբար ծավալում՝ նոր սերունդներուն տալու համար հայկական դիմագիծ ու գիտակցություն:

գ. Ամրապնդում մշակութային կապի մայր հայրենիքի հետ, որ կենդանության և լավատեսության աղբյուր է համայն հայության համար: Արդի Հայաստանի ազգային մշակույթի զարգացումն ու ծաղկումը մեր հպարտությունն է: Հայ սփյուռքի տարածքը պետք է լեցնել հայրենի մշակույթի նոր արժեքներու լույսերով:

Եվ չորրորդ՝ անհրաժեշտ է արտասահմանի հայությունը, հատկապես երիտասարդությունը ոգեշնչել ազգային իդեալներով՝ առաջին հերթին ապահովելու համար 1915-ի ցեղասպանության ճանաչումը միջազգային մակարդակի վրա:

Ես ջերմապես իմ շնորհակալությունը կհայտնեմ այս ճաշկերույթը կազմակերպողներուն, սիրելի՛ սրբազան, Ձեզի և իրավաբան Բարսեղյանին: Կվերադառնամ թեև քիչ մը հոգնած, բայց ոգևորված և ավելի լավատես: Կվերադառնամ ներքին այն զգացումով, որ մեր ժողովուրդը իր ամբողջությամբ մեկ և անբաժան է հիմնական հարցերու վերաբերյալ: Ե՛վ հայաստանցիները, և՛ սփյուռքահայերը նույն ոգեշնչումի ներքև կգտնվին, նույն համահայկական արդար իդեալներու հետապնդման իղձերով տոգորված: Երբեմն իրապաշտ մարդիկ կրնան առարկել, թե մեր ուժերով արդյոք հայկական դատը կրնա՞նք լուծել: Համենայն դեպս երիտասարդության պետք է տալ հայրենասիրական իդեալ մը: Եվ երբեմն իդեալի մը հասնելու ճանապարհը ավելի վեհ է և ազնիվ, քան թե իդեալին հասնելու իրողությունը: Այդ ճանապարհով մենք պետք է հառաջ ընթանանք լավատեսությամբ, ինքնավստահությամբ, արդի հայրենի պետության վերածնունդի գիտակցությամբ: Մարգարեաշունչ են Հովհաննես Թումանյանի տեսիլքը՝ «Եվ պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած» և վկայությունը Դանիել Վարուժանի՝ «Մենք՝ կավակներդ օգոստափառ, պիտի կերտենք նոր արշալույս»:

Այս հավատքով հառաջ ընթանանք, «զի Աստուած ընդ մեզ է»: Ամեն:

**Հունիսի 14-ին, հինգշաբթի օրը,** ժամը 14-ին, Հ. Բ. Ը. Միության նախագահ տիար Ալեք Մանուկյանը Փարիզի «Գրանդ» հյուրանոցի ճաշասրահում կազմակերպում է ճաշկերույթ՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի:

Ճաշկերույթին ներկա էին Հ. Բ. Ը. Միության մի շարք մասնաճյուղերի անդամներ:

Ճաշկերույթն անցնում է ջերմ, սրտագին մթնոլորտում:

Արտասանվում են սրտառուչ բաժակաճառեր:

Փարիզում գտնվելու օրերին, հունիսի 13-ին, 14-ին և 15-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը անձնական հանդիպումներ ունեցավ Մեծի Տանն Կիլիկիո Տ. Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի հետ, որին ուղեկցում էին Տ. Անուշավան վրդ. Դանիելյանը՝ որպես գավազանակիր, և ազգային գործիչ իրավաբան տիար Խաչիկ Պապիկյանը: Հանդիպման ընթացքում Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի և Գարեգին Բ Կաթողիկոսի միջև կարծիքներ փոխանակվեցին, Հայ Եկեղեցու ներքին միության վերականգնման և եկեղեցական ու ազգային մի շարք այլ հարցերի շուրջ: Այս առթիվ կազմվեց և հրապարակվեց համատեղ հաղորդագրություն (տես «Էջմիածին» ամսագիր, 1984, № 2, էջ 11):